

ՅԷ. Եւ զաւրավարն Յայոց Վահան Մամիկոնեան չուեալ գայր հասաներ յԱյրարատ¹ գաւառ, եւ կատարեալ զուխտ պատարագաց ի Վաղարշապատ քաղաքին, հանդերձ ընդ իւր ուխտապահ նախարարաւքն եւ այլ զաւրաւքն Յայոց, ի տանն Աստուծոյ եւ ի վկայարանս նահատակեալ կուսանացն, զուխտս պատարագաց եւ զսովորական նուէրս ընծայիցն² Աստուծոյ. եւ նախ հոգացեալ զաղքատաց դարմանս՝ ապա մեծաւ ցնծութեամբ ուրախաւային եւ ինքեանք, փառաւորելով զԱստուած: 2 Եւ չուեալք անտի երթեալք հանգչէին ի բնական ոստանին Յայոց ի Դուսի, մինչ զաւուրս ցրտաշունչ ձմերայնոյն³ սառնամանեացն անցուցանէին:

3 Եւ մինչդեռ կամէին հանգչել առ սակաւ մի եւ ոգի առնուլ յաշխատութենէն՝ գային յանկարծակի ի կողմանց Վրաց արք ղիւազգեցիկ⁴ եւ խելաշուրջք, խաւսելով բանս սուտս եւ տեսիլս խաբէութեան, զոր ոչ էր տեսեալ, ի կործանումն եւ յերկպառակութիւն զաւրաց նորին՝ առ զաւրավարին Յայոց Վահանայ յոստանին. եւ ասէին ցամենեսեան, թէ «Ողջ են եւ կենդանի սքանչելի ասպետն Սահակ եւ քաջ սեպուհն Մամիկոնեան Վասակ. եւ զմեզ յղեցին առ ձեզ, թէ «Ի փախչելն ձեր ի կռուոյն Վրաց՝ մնացաք մեք ի կռուատեղն, խոցեալք կարեւրք. եւ ըստ Աստուծոյ ազդեցութեանն, ի սաստկութենէ եւ ի կարեւոր վիրացն, զոր ունեաք⁵ ի մարմնի մերում՝ մերթ ի սող եւ մերթ անձնքարշուրթեամբ⁶ հասաք առ միմեանս, եւ հոլովեալք⁷ անկաք ի խիստ⁸ թաւուտ թուփս⁹ դժնկաց¹⁰. եւ կացեալ ի վերայ մեր ըստ Աստուծոյ ցուցակութեանն առն միոյ քահանայի հոգեւորի ի Տեղացն անապատէ, եւ ի նմին ժամու բարձեալ ի մէնջ զմի մի ըստ անձին՝ տարաւ հեռի ի տեղեացն¹¹ որպէս պարսկաւ միով հրասախաչափաւ¹². չեւ եւս գիտելով, թէ ո՛ր ոք¹³ իցեմք եւ կամ յորմէ՝ գաւառէ, այլ ըստ առաքինութեան իւրոյ՝ իբրեւ զարս յաղագս Աստուծոյ վիրաւորեալս՝ ապրեցուցանել զմեզ կամեցեալ, եւ կամ ղիպեալս վախճանի՝ ամփոփել զոսկերս մեր յաւգուտ հոգւոյ իւրոյ տենչացեալ.

1 Ձ. յարայրատ

2 ՏՏ. ընծայիցն իւր. եւ

3 ՏՏ. ձմերայնոյն

4 Ձ. ղիւազգեցիկ

5 Գտ. ունեաք

6 ՏՏ. ի անձն քարշուրթեամբ

7 ՏՏ. հոլովեալ

8 Ձ. խիստ-ի ս-ն յետոյ աւելացրած

9 թուփս-ի մասին ԲԳտ. ունին ծնթ. «Այլ օր. տեղիս»:

10 ՏՏ. դժնկաց. Ձ. դժնկաց

11 ՏՏ. չիք ի տեղեացն

12 Ձ. հրասախաչափաւ. ՏՏ. հրասախաչափու

13 ՏՏ. ո՛ր ոք